Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N **23.1/[39295]-10**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ

ԺԱՄԸ 15:15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Տ. Սարգսյան	ՀՀ վարչապետ (Խորհրդի նախագահ)
Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Ջախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Հ. Նաղդալյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Աղաջանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ս. Ղոնաղչյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ա. Մայսուրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի պետ
Ա. Գաբրիելյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ

1. *Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքներիտեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի արդյունքների գնահատում*

(Զեկուցող՝ Մ. Վարդանյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) համաձայնություն տալ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի իրականացման ԱԶԲ-ի առաջարկին,

2) ձևավորել խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի արդյունքների գնահատման հանձնաժողով, հետևյալ կազմով.

1. Հրանտ Բեգլարյան,	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2. Մուշեղ Թումասյան,	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ,
3. Ռուզաննա Ալավերդյան,	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ,
4. Սերոբ Տեր-Պողոսյան,	ՀՀ Վարչապետի խորհրդական,
5. Էդգար Ավետյան,	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի գործադիր տնօրեն,
6. Արամ Հաջյան,	Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Ճարտարագիտական ֆակուլտետի դեկան,

7. Ֆելիքս Փիրումյան, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ՕԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն:

2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության բաժնի պետերի ընտրության արդյունքների հաստատում

(Զեկուցող՝ Մ. Վարդանյան)

2. Քննարկումներից հետո Խորհուրդը որոշեց՝ հաստատել մրցույթի արդյունքները և առաջարկեց հետևյալ անձանց հետ կնքել աշխատանքային պայմանագրեր.

1) Ֆինանսահիրավաբանական բաժնի պետի պաշտոնում՝ Սերգեյ Մելիք- Յոլչյանին,
2) Պայմանագրային կառավարման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Վարդանյանին,
3) Ծրագրերի նախապատրաստման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Կարախանյանին,
4) Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի պետի պաշտոնում՝ Արմինե Սիմոնյանին:

3. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանշի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) վերանայման նպատակով տարաբնակեցման տեղական խորհրդատուների ընտրության մրցույթի տեխնիկական առաջադրանքի հաստատելու մասին

(Զեկուցող՝ Մ. Վարդանյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանշի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերանայման նպատակով տարաբնակեցման տեղական խորհրդատուների ընտրության մրցույթի տեխնիկական առաջադրանքը,

2) հանձնարարել գնահատող հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ վարել տեղական խորհրդատուԳոհար Թադևոսյանի հետ,

3) հանձնարարել ՕԻԿ-ի գործադիր տնօրեն Ֆ.Փիրումյանին՝ բանակցությունների արդյունքում ձևավորված պայմանագրի նախագիծը համաձայնեցնել ԱԶԲ-ի հետ և մեկ ամիս ժամկետով պայմանագիր կնքել տեղական խորհրդատուԳոհար Թադևոսյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ,
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ